Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի
2025թ. սեպտեմբերի 12-ի թիվ 755-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Սիսիան համայնքի տրանսպորտ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ **«Սիսիան համայնքի տրանսպորտ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ հաստատություն) տնօրենի** թափուր պաշտոն զբաղեցնելու համար: Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ք. Սիսիան, Սիսական փողոց շենք 41:

Հաստատության տնօրենն իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները՝

ա/ առանց լիազորագրի գործում է Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը պետության, նրա մարմինների, այլ կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում,

բ/ տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

գ/ կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

դ/ կազմակերպում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանք՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը,

ե/ տալիս է լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով,

զ/ բանկում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ.

է/ սահմանում է Կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

ը/ հաստատում է Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին, տալիս է համապատասխան լիազորագրեր,

թ/ արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ,և վերահսկում դրանց կատարումը,

ժ/ կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

ժա/ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին,

ժբ/ աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

ժգ/ իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված կամ հիմնադրի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարականներ:

Հաստատության տնօրենի հիմնական աշխատավարձի չափը կազմում է 320000 /երեք հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի՝

1) բարձրագույն կրթություն.
2) հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան

բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

3) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
4) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
5) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
6) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.
7) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
8) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթը կկայանա **2025 թվականի հոկտեմբերի 14-ին, ժամը 11:00-ին,** Սիսիանի համայնքապետարանի շենքում /ք. Սիսիան, Սիսական 31/:

Մրցույթին մասնակցելու համար դիմող քաղաքացիները Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում.
2) մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի.
3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.
4) ինքնակենսագրություն.
5) անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի, արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակները և պատճենները.
6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-18:00-ն, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային մյուս օրերից, Սիսիանի համայնքապետարան, ք. Սիսիան, Սիսական 31 հասցեում: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ **2025 թվականի սեպտեմբերի 29-ը մինչև ժամը 17:00-ն**:

Մրցույթի պայմաններին հանգամանալից ծանոթանալու համար դիմող քաղաքացիները կարող են ուսումնասիրել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N02-Ն հրամանը և այլ իրավական ակտերը՝ Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի www.arlis.am պաշտոնական կայքում:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները տեղեկություններ և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմ /ք. Սիսիան, Սիսական 31, հեռ. /0283/ 2-33-30/:

Սիսիանի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար՝ **Կ. Իվանյան**